

«ՔՐԱՌԻԴՏԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՔՐԱՌԻԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության
բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՔՐԱՌԻԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (Ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ), համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար,

համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:



MOORE

- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռոբերտ Մելիքյան, Ph.D, ACCA

Տնօրեն

Ղեկավար գործընկեր՝



Քնար Պետրոսյան, FCCA

Աուդիտի գործընկեր՝

28 ապրիլ 2026թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ և Ոչ նյութական ակտիվներ	4	22,777	33,859
Ներդրումներ	6	139,033	431
Հետաձգված հարկային ակտիվներ	21	43,891	8,851
		205,701	43,141
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	30,695	34,432
Տրված փոխառություններ	5	49,624	246,911
Ներդրված ավանդներ	8	60,000	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	38,066	8,830
		178,385	290,173
Ընդամենը ակտիվներ		384,086	333,314
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	10	1	1
Կուտակված շահույթ		(110,398)	224,862
		(110,397)	224,863
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարձակալության գծով պարտավորություն	12	5,438	21,027
Թողարկված պարտատոմսեր	13	400,000	-
		405,438	21,027
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	49,454	65,247
Վարձակալության գծով պարտավորություն	12	15,498	15,068
Ստացված փոխառություններ		4,500	-
Թողարկված պարտատոմսեր	13	11,780	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	7,813	-
Ստացված վարկեր	15	-	7,109
		89,045	87,424
		494,483	108,451
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		384,086	333,314

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 28 ապրիլ 2026թ.

Տնօրեն

Նարեկ Վարդանյան

Գլխավոր հաշվապահ

Վարդուհի Աղայան



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Հասույթ	16	582,939	625,765
Ինքնարժեք	17	(432,760)	(354,145)
Համախառն շահույթ		150,179	271,620
Գուդվիլի արժեզրկում		-	(22,959)
Տրված փոխառությունների արժեզրկում		(201,130)	(145,829)
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքով սկզբնական ճանաչումից վնաս		-	(2,842)
Իրացման ծախսեր	18	(12,106)	(10,261)
Վարչական և այլ ծախսեր	19	(270,518)	(249,699)
Գործառնական գործունեությունից վնաս		(333,575)	(159,970)
Ֆինանսական եկամուտ/(ծախս)	20	(36,522)	26,287
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		(1,024)	3,279
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(371,121)	(130,404)
Շահութահարկի գծով փոխհատուցում	21	35,861	2,970
Տարվա վնաս		(335,260)	(127,434)
<i>Տարվա վնաս, որը վերագրելի է՝</i>			
Մայր կազմակերպության սեփականատերերին		(335,260)	(127,434)
<i>Սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող վնասի՝ մեկ բաժնեմասին բաժին ընկնող վնաս են</i>			
Մեկ բաժնեմասին բաժին ընկնող բազային վնաս		(335,260)	(127,434)
Մեկ բաժնեմասին բաժին ընկնող նոսրացված վնաս		(335,260)	(127,434)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(335,260)	(127,434)
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք՝ վերագրելի Մայր կազմակերպության սեփականատերերին		(335,260)	(127,434)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	358,622	358,623
Տարվա վնաս	-	(127,434)	(127,434)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(127,434)	(127,434)
Շահաբաժիններ	-	(6,326)	(6,326)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	(6,326)	(6,326)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	224,862	224,863
Տարվա վնաս		(335,260)	(335,260)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(335,260)	(335,260)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	(110,398)	(110,397)

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մուտքեր մատուցված ծառայություններից		574,267	591,595
Վճարումներ մատակարարներին		(171,948)	(115,808)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից		(536,877)	(470,129)
Վճարումներ բյուջե		(319)	(1,357)
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր		8,000	-
Գործառնական գործունեությունից այլ ելքեր		(4,990)	(3,482)
<i>Գործառնական գործունեությունից ստացված(վճարված) զուտ դրամական միջոցներ</i>		<i>(131,867)</i>	<i>819</i>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ներդրված ավանդների		(60,000)	-
Տրամադրված փոխառությունների զուտ (ավելացում)/ պակասեցում		(4,790)	36,866
Հիմնական միջոցների ձեռքբերում		(5,237)	-
Այլ ընկերությունների թողարկված պարտատոմսերի ձեռքբերում		(136,820)	-
Ստացած տոկոսներ		9,272	-
<i>Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>		<i>(197,575)</i>	<i>36,866</i>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարկեր և փոխառությունների մարում		(7,109)	(43,076)
Պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր		404,048	-
Վճարված տոկոսներ		(38,288)	-
Վճարված շահաբաժիններ		-	(6,010)
<i>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված/(վճարված) զուտ դրամական միջոցներ</i>		<i>358,651</i>	<i>(49,086)</i>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ		29,209	(11,401)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		27	5
Դրամական միջոցների արժեզրկում		-	(2,119)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		8,830	22,345
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում		38,066	8,830

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Քրաուդֆանդինգ Ֆորմուլա» Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերությունը (Խումբ) հիմնադրվել և պետական գրանցում է ստացել է 2017 թվականին:

Խմբի հիմնական ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Խմբի հիմնական գործունեությունն է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծրագրերի մշակման խորհրդատվական, ծրագրերի մշակման, ինչպես նաև հարակից այլ ծառայությունները:

Խմբի աշխատակիցների թվաքանակը 2025թ. վերջին կազմել է 45 մարդ (2024թ.՝ 49 մարդ):

Խմբի իրավաբանական հասցեն է՝ Հակոբ Հակոբյան 3, Երևան:

Գործարար միջավայր

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա՝ հանգեցնելով հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Հայաստանի տնտեսությունը 2025թ.-ին շարունակել է աճել, թեպետ աճի դինամիկան համեմատաբար նվազել է:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Խմբի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Խմբի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ
- ՖՀՄՍ 18 ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում
- Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ
- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ
- Փոփոխություններ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում

2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները .

Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Բի Էմ Ընդ ԷՄ» ՍՊԸ	100%	11.08.2017թ.	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	03.01.2023թ

Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ուղորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Ինվեսթմենթ Քոմիթի» ՍՊԸ	100%	16.01.2018թ.	Այլ ծառայություններ	12.07.2023թ.
«Թեքմարկ» ՍՊԸ	100%	21.12.2020թ.	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	03.01.2023թ.

Դուստր ընկերություններից «Բի Էմ Ընդ ԷՄ» ՍՊԸ-ի և «Թեքմարկ» ՍՊԸ-ի գործունեությունները դադարեցված են անորոշ ժամանակվով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմաբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2025թ.	2024թ.
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Եվրո	449.01	413.89

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից

առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն գուտ ակտիվներում:

Խմբի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների բոլոր հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են երկարաժամկետ վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	- 1-5 տարի
Արտադրական և տնտեսական գույք	- 5 տարի
Այլ Հիմնական միջոցներ	- 5 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.5 Գուղվիլ

Խումբը չափում է գույովիլը ձեռք բերման ամսաթվի դրությամբ՝ այն չափելով որպես ստորև ներկայացված ա և բ կետերի դրական տարբերություն:

ա) ստորև թվարկվածների հանրագումար՝

(i) փոխանցված հատուցում,

(ii) ձեռք բերվողում ցանկացած չվերահսկող բաժնեմասի գումար

բ) ձեռքբերման ամսաթվի դրությամբ ձեռք բերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների զուտ գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով՝ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում առաջացող գույովիլը, բաշխվում է դրամաստեղծ միավորներին և արժեզրկումը գնահատվում է այդ մակարդակում: Խումբը նվազագույնը տարին մեկ անգամ գնահատում է գույովիլի արժեզրկումը:

3.6 Վարձակալված ակտիվներ

Խումբը որպես վարձակալ

Խումբը վարձակալական պայմանագրերը կնքում է հիմնականում պահեստային տարածքի և ընկերության վարչական անձնակազմի համար: Խումբը վաճառքի և ետադարձ պայմանագրեր չի կնքում:

Խումբը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Խումբը իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Խումբը իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Խումբը իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից:

Խումբը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Խումբը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղջելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխումն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար, օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ առևտրային և այլ պարտավորություններում:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և շահույթի կամ վնասի և այլ

համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 23.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով)․

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և տրված փոխառությունները:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում: Խումբը հաշվառում է ներդրումը իրական արժեքով: Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեքրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեքրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և

հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և

Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, համաձայն որի Պահուստավորման սանդղակը հիմնվում է Խմբի պատմական կորստի դրույթաչափերի վրա՝ ճշգրտված ապագա սպասվող դեպքերով: Խումբը դեբիտորական պարտքերի արժեզրկումները ճանաչում է ներքոնշյալ դրույթներով, որոնք կարող են հետագայում փոխվել՝ դեբիտորական պարտքերի հետագա արժեզրկումների արդյունքում:

Դեբիտորական պարտքերի պայմանագրային ժամկետայնության օրեր	Արժեզրկման տոկոս
Մինչև 90 օր	10%
91-180 օր	20%
181-270 օր	50%
271 և ավել	100%

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են ստացված վարկերը և թողարկված պարտատոմսեր, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 23.2-ում:

Վարկեր, փոխառություններ և թողարկված պարտատոմսեր

Վարկեր, փոխառություններ և թողարկված պարտատոմսերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո Վարկեր, փոխառություններ և թողարկված պարտատոմսերը չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես

Ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.9 Սեփական կապիտալ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում Խումբը ձեռք բերման ամսաթվին չափում է ձեռք բերվողում չվերահսկող բաժնեմասի բաղադրիչները, որոնք հանդիսանում են գործող սեփականության բաժնեմասեր և լուծարման դեպքում դրանց տիրապետողներին շնորհում են կազմակերպության գուտ ակտիվներում համամասնական մասնաբաժին, կամ ա) իրական արժեքով, կամ բ) ձեռք բերվողի որոշելի գուտ ակտիվների ճանաչված գումարներում գործող սեփականության գործիքների մասնաբաժնի համամասնությամբ: Չվերահսկող բաժնեմասերի մնացած բոլոր բաղադրիչները Խումբը չափում է իրենց ձեռք բերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով, եթե միայն ՖՀՄՄ-ներով չափման այլ հիմունք չի պահանջվում:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.12 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում ծրագրերի մշակման խորհրդատվական, ծրագրերի մշակման և վաճառքի գործունեությունից, ինչպես նաև հարակից ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Խումբը հաճախ կատարում է գործարքներ, որոնք ներառում են ծրագրերի մշակման խորհրդատվական, ծրագրերի մշակման, ինչպես նաև հարակից ծառայությունների մատուցում: Բոլոր դեպքերում պայմանագրի հետ կապված գործարքի ընդհանուր գինը բաշխվում է տարբեր կատարման պարտականությունների միջև՝ ելնելով նրանց համեմատական առանձին-առանձին վաճառքի գներից: Պայմանագրի հետ կապված գործարքի գինը բացառում է երրորդ կողմի համար հավաքագրած ցանկացած գումարները:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ծառայությունը:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ (տե՛ս ծանոթագրություն 11): Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքա- վորումներ	Արտա- դարկան և տնտեսակա ն գույք	Համա- կարգչային ծրագրեր և լիցեն- զիաներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Օգատգործ ման իրավու- նքով ակտիվներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Մկզբնական արժեք</i>							
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,904	7,211	4,903	3,173	80,745	3,846	121,782
Ավելացում	2,221	4,751	-	-	-	-	6,972
Օտարում	(3,399)	(1,646)	-	-	-	-	(5,045)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,726	10,316	4,903	3,173	80,745	3,846	123,709
Ավելացում	5,237	974	-	-	-	-	6,211
Օտարում	(1,010)	(79)	-	-	-	(60)	(1,149)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,953	11,211	4,903	3,173	80,745	3,786	128,771
<i>Կուտակված մաշվածություն</i>							
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,946	6,229	4,777	2,878	41,382	2,657	74,869
Տարվա հաշվարկ	2,047	1,212	124	-	12,112	1,036	16,531
Օտարման հետևանքով դուրսգրում	(130)	(1,420)	-	-	-	-	(1,550)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,863	6,021	4,901	2,878	53,494	3,693	89,850
Տարվա հաշվարկ	3,779	1,317	-	-	12,112	85	17,293
Օտարման հետևանքով դուրսգրում	(1,010)	(79)	-	-	-	(60)	(1,149)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,632	7,259	4,901	2,878	65,606	3,718	105,994
<i>Հաշվեկշռային արժեք</i>							
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,863	4,295	2	295	27,251	153	33,859
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,321	3,952	2	295	15,139	68	22,777

Ամբողջությամբ մաշված և ամորտիզացված ակտիվներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված և ամորտիզացված ակտիվները կազմել են 47,825 հազար դրամ (2024թ.՝ 31,208 հազար դրամ):

5 Տրված փոխառություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ընթացիկ ակտիվներ</i>		
Տրված փոխառություններ	49,624	246,911
	49,624	246,911

Տրված փոխառությունները անտոկոս են և մինչև 1 տարի մարման ժամկետով են (2024թ. -ին՝ 1 տարի): Տրված փոխառությունները սկզբնական ճանաչման ժամանակ ներկայացվել են իրական արժեքով և հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Իրական արժեքի և ամորտիզացված արժեքի տարբերությունը ճանաչվել է որպես Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքով սկզբնական ճանաչումից օգուտ/վնաս ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում:

Խմբի տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 24-ում:

6 Ներդրումներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումներ</i>		
Այլ ընկերությունների պարտատոմսեր	138,602	-
<i>Իրական արժեքով շահույթ վնասով հաշվառվող ներդրումներ</i>		
Ներդրումային ընկերությունների փայեր	431	431
	139,033	431

Այլ ընկերությունների պարտատոմսերում ներդրումները 1.5-3 տարի ժամկետով են և հաշվարկային տոկոսադրույքը կազմում է 10.5-12.5% (2024 թվականին բացակայում է):

Այլ ընկերությունների պարտատոմսեր իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ գեղչման ազդեցությունն էական չէ:

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	14,327	16,604
	14,327	16,604
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Դեբիտորական պարտքեր բյուջեից	12,200	17,051
Այլ	4,168	777
	16,368	17,828
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,695	34,432

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Տե՛ս ծանոթագրություն 24 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

Տրված փոխառությունների իրական արժեքի և ամորտիզացված արժեքի տարբերությունը էական չէ:

8 Ներդրված ավանդներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կարճաժամկետ ավանդներ	60,000	-
	60,000	-

Ներդրված մինչև մեկ տարի ժամկետով են և 7.25%-9.75% հաշվարկային տոկոսադրույքով:

Ներդրված ավանդների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

9 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	51	51
Բանկային հաշիվներ	38,015	8,779
	38,066	8,830

Տե՛ս ծանոթագրություն 24 (ա) դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

10 Կապիտալ և պահուստներ

10.1 Բաժնետիրական կապիտալ

Խմբի կանոնադրական կապիտալը կազմում է 1 հազար դրամ, որը բաժանված է մեկ բաժնեմասի, որը պատկանում է Քրաուդֆանդինգ Ֆորմուլա, Ինք. ընկերությանը (գտնվելու վայրը՝ Դելավեր, ԱՄՆ, Հաշվառման համարը՝ 38-4070353): Մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1 հազար դրամ: Խումբը չունի վերջնական վերահսկող:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	5,438	7,411
	5,438	7,411
<i>Ոչ ֆինանսական պարտավորություններ</i>		
Կարճաժամկետ կրեդիտորական պարքեր աշխատավարձի գծով	40,941	43,604
Վճարվելիք հարկեր և տուրքեր	3,075	14,232
	44,016	57,836
	49,454	65,247

Խմբի արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 24 (ա)-ում:

12 Վարձակալության գծով պարտավորություն

Վարձակալական պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		
Վարձակալության գծով պարտավորություններ	5,438	21,027
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>		
Վարձակալության գծով պարտավորություն	15,498	15,068

Ընկերությունը վարձակալել է տարածք, որն օգտագործվում է վարչական նպատակով: Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս ծանոթագրություն 4-ը): Ընկերության վարձակալության մնացորդային ժամկետը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1.4 տարի է (2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2.4 տարի):

Վարձակալության գծով պարտավորության փոփոխությունը 2025թ. և 2024թ. Ներկայացված է ստորև:

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	36,095	47,539
Ֆինանսական ծախս	1,557	5,272
Վճարումներ	(16,716)	(16,716)
Մնացորդ դեկտեմբերի 31 դրությամբ	20,936	36,095

13 Թողարկված պարտատոմսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		
Թողարկված պարտատոմսեր	400,000	-
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>		
Թողարկված պարտատոմսեր	11,780	-

2025թ. -ին Ընկերությունը թողարկել է պարտատոմսեր 3 տարի ժամկետով՝ տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը՝ 12.75%, թողարկման ծավալը՝ 400,000 հազար դրամ, անվանական արժեքը՝ 100 հազար դրամ

14 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Եկամուտներին վերաբերող շնորհներ	7,813	-
	7,813	-

Եկամուտներին վերաբերող շնորհները միջազգային ընկերությունից է մինչև մեկ տարի ժամկետով:

15 Ստացված վարկեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային վարկեր	-	7,109
	-	7,109

2024թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային վարկը ԱՄՆ դոլարով է, 2 ամիս ժամկետով և 9% հաշվարկային տոկոսով: 2024թ. -ի ընթացքում վարկերի մայր գումարների և տոկոսագումարների վճարման ժամկետների խախտում չի եղել: Խմբի վարկային պարտքը գոյանում է ՀՀ մեկ բանկից:

Ընթացիկ վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Տե՛ս ծանոթագրություն ` 24 (ա) վարկերի և փոխառությունների արժույթների բացահայտման համար:

16 Հասույթ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով ծառայություններ	582,939	625,765
	582,939	625,765

17 Ինքնարժեք

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	432,760	354,145
	432,760	354,145

18 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձի գծով ծախսեր	12,106	10,210
Մաշվածության գծով ծախս իրացման	-	51
	12,106	10,261

19 Վարչական և այլ ծախսեր

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Աշխատանքի վճարման ծախսեր	137,750	131,138
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	26,727	20,352
Բանկային ծախսեր	17,319	3,465
Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախս	17,293	16,186
Խորհրդատվական ծախսեր	12,533	22,491
Գրասենյակային և տնտեսական ծախսեր	9,173	7,740
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	8,591	6,568
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	2,853	247
Այլ ակտիվների արժեզրկում	-	4,963
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	-	944
Վարչական այլ ծախսեր	38,279	35,605

Հազար դրամ	2025թ.	2024թ.
	270,518	249,699

20 Ֆինանսական եկամուտ/(ծախս)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտ	11,017	-
Տոկոսային ծախս	(45,982)	(2,787)
Ֆինանսական ծախս վարձակալության գծով	(1,557)	(5,272)
Տոկոսային եկամուտ փոխառությունների զեղչումից	-	34,346
Ֆինանսական եկամուտ/(ծախս)	(36,522)	26,287

21 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	821	-
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	35,040	2,970
	35,861	2,970

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	%	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	%
վնաս նախքան շահութահարկի գծով հարկումը	(371,121)		(130,404)	
Շահութահարկ՝ հարկի կիրառելի դրույքաչափով	(66,802)	18%	(23,473)	18%
Չնվազեցվող ծախս գուտ	66,417	-18%	20,503	-16%
Նախորդ տարիների հարկային վնաս	(35,476)	10%	-	-
	(35,861)	-10%	(2,970)	2%

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեկան մնացորդ	8,851	5,881
Շահույթ/(վնասում) ճանաչված	35,040	2,970
Տարեկան մնացորդ	43,891	8,851

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հհարկային վնաս	-	35,476	35,476
Վարձակալության պարատվորության գծով հետաձգված ակտիվ	1,591	(545)	1,046
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,260	109	7,369
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	8,851	35,040	43,891

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Վարձակալության պարտավորության գծով հետաձգված ակտիվ	1,471	120	1,591
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,410	2,850	7,260
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	5,881	2,970	8,851

22 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

22.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խուսրդ իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների գույտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի հավաստի տվյալները: Խմբի պաշարների հետագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ միջազգային շուկայում և աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզաձև ձևերի գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 25):

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 3.7-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված փոխառություններ	49,624	246,911
Ներդրված ավանդներ	60,000	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14,327	16,604
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,066	8,830
Ներդրումներ	138,602	-
<i>Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Ներդրումներ	431	431
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	301,050	272,776
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Վարձակալության գծով պարտավորություն	20,936	36,095
Թողարկված պարտատոմսեր	411,780	-
Վարկեր	-	7,109
Ստացված փոխառություններ	4,500	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,438	7,411
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	442,654	50,615

24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի, որոնք կապված են Ֆինանսական գործիքների հետ: Այս ռիսկերն են

- շուկայական ռիսկը,
- պարտքային ռիսկը
- իրացվելիության ռիսկը:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքովաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

1) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

ա) Արտարժութային ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Խմբի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով՝ հիմնականում ԱՄՆ դոլարով արտահայտված գնումների, վարկերի և փոխառությունների հետ:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Խմբի ենթարկվածությունը

2025թ.				
Հոդված	ՀՀ դրամ	Շվեյցարական ֆրանկ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Տրված փոխառություններ	48,980	-	644	49,624
Կարճաժամկետ ավանդներ	60,000	-	-	60,000
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,337	-	7,990	14,327
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,839	7,914	18,313	38,066
Ներդրումներ	139,033	-	-	139,033
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	266,189	7,914	26,947	301,050
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Վարձակալության գծով պարտավորություն	20,936	-	-	20,936
Պարտատոմսերի երկարաժամկետ մաս	411,780	-	--	411,780
Ստացված փոխառություններ	4,500	-	-	4,500
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,427	-	11	5,438
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	442,643	-	11	442,654
Զուտ ենթարկվածություն	(176,454)	7,914	26,936	(141,604)

2024թ.			
Հոդված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Տրված փոխառություններ	246,911	-	246,911
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,297	10,307	16,604
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,044	5,786	8,830
Ներդրումներ	431	-	431
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	256,683	16,093	272,776
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Վարձակալության գծով պարտավորություն	36,095	-	36,095
Վարկեր	-	7,109	7,109
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,411	-	7,411
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	43,605	7,109	50,615
Զուտ ենթարկվածություն	213,177	8,984	222,161

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չառնելով կանխատեսվող առք ու վաճառքի ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցությունը		
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	2025թ.	2024թ.
Շահույթի վրա	2%	539	180
Հազար դրամ	Շվեյցարական ֆրանկի ազդեցությունը		
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	2025թ.	2024թ.
Շահույթի վրա	2%	158	-

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Խումբը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով վարկային միջոցներ: Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքերի նկատմամբ Խմբի ենթարկվածության չափը որոշող քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքեր կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

2) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

ա) Առևտրային դեբիտորական պարտքեր

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՄ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո է:

3) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Խմբի հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով, Խումբը կատարում է դրամական միջոցների հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ հիմք ընդունելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական պահանջները: Որպես կանոն, այս պահանջները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Խումբը ձգտում է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների այնպիսի չափ, որը կգերազանցի ֆինանսական պարտավորություններից (բացառությամբ առևտրական կրեդիտորական պարտքերի) ակնկալվող դրամական միջոցների արտահոսքը հաջորդող 60 օրերի ընթացքում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները

2025թ.							
Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Վարձակալության գծով պարտավորություն	1,393	15,753	8,092	-	-	25,238	20,936
Փոխառություն	4,500	--	-	-	-	4,500	4,500
Թողարկված պարտատոմսեր	11,780	-	400,000	-	-	411,780	411,780
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,438	-	-	-	-	5,438	5,438
	23,111	15,753	408,092	-	-	446,956	442,654

2024թ.							
Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Վարձակալության գծով պարտավորություն	1,393	15,323	23,681	-	-	40,397	36,095
Վարկեր	3,641	3,551	-	-	-	7,192	7,109
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,411	-	-	-	-	7,411	7,411
	12,445	18,874	23,681	-	-	55,000	50,615

25 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Խմբի պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գտնվում են Իրական արժեքի չափման հիերարխիայի 1-ին մակարդակում:

25.1 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31 դրությամբ			
	Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Նկարագրություն				
Ֆինանսական ակտիվներ				
Տրված փոխառություններ	49,624	-	49,624	-
Կարճաժամկետ ավանդներ	60,000		60,000	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14,327	-	14,327	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,066	-	38,066	-
Ներդրումներ	138,602	-	138,602	-
Ֆինանսական պարտավորություններ				
Վարձակալության գծով պարտավորություն	20,936	-	20,936	-
Պարտատոմսերի երկարաժամկետ մաս	400,000	-	400,000	-
Ստացված փոխառություններ	4,500	-	4,500	-

Հազար դրամ		2025թ. դեկտեմբերի 31 դրությամբ		
Նկարագրություն	Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,438	-	5,438	-

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31 դրությամբ		
Նկարագրություն	Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Տրված փոխառություններ	246,911	-	246,911	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16,604	-	16,604	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,830	-	8,830	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Վարձակալության գծով պարտավորություն	36,095	-	36,095	-
Վարկեր	7,109	-	7,109	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,411	-	7,411	-

26 Պարտավորվածություններ

26.1 Իրավական պարտավորվածություններ

Առևտրային եզրակացության օրվա դրությամբ Խումբը հանդես չի գալիս որպես պատասխանող և հայցվոր որևէ դատական գործընթացում:

27 Պայմանականություններ

27.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար: Մակայն Խումբը ունի Մասնագիտական ապահովագրություն երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների նկատմամբ: Չնայած վերոնշյալի գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

27.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

28 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	38,066	8,830

29 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են բաժնետերերը, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն:

29.1 Վերահսկողություն

Խումբը չունի վերջնական վերահսկող:

29.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Հասույթ	582,938	621,151

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7,623	10,307

29.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Վարչական ծախսեր» հոդվածում.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	73,482	31,667